# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**«Սայբերտրաստ» ՍՊԸ և «ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության» աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի հետ 2010 թվականի հունվարի 27-ին կնքված «Անշարժ գույքի ենթավարձակալության» պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

*երկու հազար տասներեք թվականի փետրվարի քսանվեցին* *ք.Երևան*

«Սայբերտրաստ» ՍՊԸ-ն (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 30ա, վկայական № 03Ա080315, տրված 06.06.2008թ.), այսուհետ՝ Կողմ 1, ի դեմս Ռաֆիկ Դերձյանի (անձնագիր AK 0633157, տրված 08.10.2010թ. 008-ի կողմից, բնակվում է ք.Երևան, Սեբաստիա 3/9, բն. 14), որը գործում է երկու հազար տասներեք թվականի փետրվարի 3-ին տրված № 02/461 լիազորագրի հիման վրա, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետև՝ Կողմ 2), ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի, ով գործում է ՀՀ Կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի № 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, ում անունից հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Մալաթիա-Սեբաստիայի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Մեսրոպ Սաֆարյանը (անձնագիր՝ AM 0503764, տրված 04.11.2011թ. 004-ի կողմից) /այսուհետ՝ Կողմեր/, որը գործում է երկու հազար տասներեք թվականի փետրվարի 8-ին տրված թիվ ՄՄ/ԱգԱ/1/1179-13 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, /այսուհետ՝ Կողմեր/ հիմք ընդունելով 2010թ. հունվարի 27-ին երկուստեք կնքված «Անշարժ գույքի ենթավարձակալության» պայմանագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Քանի որ կողմերի միջև 27.01.2010թ. կնքված ենթավարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից /01.01.2013թ./ հետո ենթավարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, հետևաբար պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով, ուստի ելնելով վերոգրյալից, կողմերը որոշեցին 2010թ. հունվարի 27-ին երկուստեք կնքված «Անշարժ գույքի ենթավարձակալության» պայմանագրում /այսուհետ՝ Պայմանագիր/ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

   1/ Պայմանագրի 1.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.5 Վարձավճարի չափը ամսական կազմում է 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Նշված գումարը ենթավարձակալը Վարձատուին է տրամադրում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը»:

2/ Պայմանագրի 1.6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.6. Սույն պայմանագիրը գործում է մինչև երկու հազար տասներեք թվականի դեկտեմբերի քսանհինգը ներառյալ: Կողմերը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, սահմանում են, որ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև սույն պայմանագիրը կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ սկսած երկու հազար տասներեք թվականի հունվարի մեկից»:

3/ Պայմանագիրը լրացնել նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3. Կողմերի պատասխանատվությունը՝

3.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0.5%-ի /զրո ամբողջ հինգ տոկոսի» չափով:

3.2 Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05%-ի /զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի/ աչփով:

3.3 Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

3.4 Ենթավարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար ենթավարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 %-ի /զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի/ չափով:

3.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.6 Տույժերի և /կամ/ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց»:

4. Պայմանագիրը լրացնել նոր 4-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ՝

«4. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» պայմանագրով վարձակալության /ենթավարձակալության/ հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում պատշաճ վավերացման պահից:

2.2 Սույն համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև երկու հազար տասը թվականի հունվարի քսանյոթին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 /չորս/ օրինակից:

2.4 Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2 Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.3 Սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Վարձատու»

«Ենթավարձակալ»

Երկու հազար տասներեք թվականի փետրվարի քսանվեցին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաքոյանիս կողմից:

Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

ՀՀ Քաղ.օր.-ի 301 հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից /համաձայնագրից/ ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում:

Ստորագրողների ինքնությունը և գործունակությունը ստուգված են:
Գրանցված է սեղանամատյանում N 1656
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար՝ Է.Շաքոյան

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**<<ՍԱՅԲԵՐՏՐԱՍՏ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ և <<ՀՀ ԱՍՀՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ>> ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԵՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ ԿՆՔՎԱԾ <<ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

քաղաք Երևան, երկու հազար տասնչորս թվականի [illegible] [illegible]

<<Սայբերտրաստ>> ՍՊ ընկերությունը (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Վանաձոր, Տիգրան Մեծի 30ա, վկայական N 03Ա080315, տրված 06.06.2008թ.), (այսուհետ՝ Կողմ-1) ի դեմս տնօրեն Գոռ Դերձյանի (անձնագիր. AK0368897, տրված՝ 01.09.2009թ. 008-ի կողմից, բնակվում է ք. Երևան, Լամբրոնի 41), մի կողմից, և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, ում անունից հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Մալաթիա-Սեբաստիայի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Արմենակ Մաթևոսյանը՝ (անձնագիր՝ AM 0297251, տրված 13.05.2011թ. 013-ի կողմից) (այսուհետ՝ Կողմեր), որը գործում է երկու հազար տասնչորս թվականի փետրվարի չորսին տրված N ՄՄ/ԱգԱ-1/727-14 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2010թ. հունվարի 27-ին երկուստեք կնքված <<Անշարժ գույքի ենթավարձակալության>> պայմանագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշել են 2010թ. հունվարի 27-ին երկուստեք կնքված <<Անշարժ գույքի ենթավարձակալության>> պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Պայմանագրի 1.6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1.6. Սույն պայմանագրը գործում է մինչև երկու հազար տասնհինգ թվականի դեկտեմբերի քսանհինգը ներառյալ: Կողմերը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, սահմանում են, որ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև սույն պայմանագիրը կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ սկսած երկու հազար տասնչորս թվականի հունվարի մեկից:

2) Պայմանագիրը լրացնել նոր 4-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ՝

4. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, աղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագրով վարձակալության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:

## 2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում պատշաճ վավերացման պահից:

2.2. Սույն համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև երկու հազար տաս թվականի հունվարի քսանյոթին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 (չորս) օրինակից:

2.4. Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:

## 3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. Կողմերի վավերապայմանները

| Կողմ-1 | Կողմ-2 |
| --- | --- |
| ...ա Դերձյան<br>Անձնագիր. AK0368897, տրված՝ 01.09.2009թ. 008-ի կողմից | Արմենակ Մաթևոսյան<br>**Անձնագիր՝ AM 0297251, տրված 13.05.2011թ. 013-ի կողմից** |

Երկու հազար տասնչորս թվականի ____________ սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար ____________ կողմից: Համաձայնագիրը ստորագրվել է քաղ. ____________ի իմ ներկայությամբ: Նրա ինքնությունը և գործունակությունը ստուգված են:
Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում 1253 ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների
Նոտար ____________

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## <<ՍԱՅԲԵՐՏՐԱՍՏ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ և <<ՀՀ ԱՍՀՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ>> ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԵՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ ԿՆՔՎԱԾ <<ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

քաղաք Երևան, երկու հազար [illegible]

<<Սայբերտրաստ>> ՍՊ ընկերությունը (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Վանաձոր, Տիգրան Մեծի 30ա, վկայական N 03Ա080315, տրված 06.06.2008թ.), (այսուհետ՝ Կողմ-1) ի դեմս տնօրեն Գոռ Դերձյանի (անձնագիր. AK0368897, տրված՝ 01.09.2009թ. 008-ի կողմից, բնակվում է ք. Երևան, Լամբրոնի 41), մի կողմից, և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, ում անունից հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Մալաթիա-Սեբաստիայի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Արմենակ Մաթևոսյանը՝ (անձնագիր՝ AM 0297251, տրված 13.05.2011թ. 013-ի կողմից) (այսուհետ՝ Կողմեր), որը գործում է երկու հազար տասնհինգ թվականի նոյեմբերի քսանվեցին տրված N ՄՄ/10765-15 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2010թ. հունվարի 27-ին երկուստեք կնքված <<Անշարժ գույքի ենթավարձակալության>> պայմանագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշել են 2010թ. հունվարի 27-ին երկուստեք կնքված <<Անշարժ գույքի ենթավարձակալության>> պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Պայմանագրի 1.6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1.6. Սույն պայմանագիրը գործում է մինչև երկու հազար տասնյոթ թվականի դեկտեմբերի քսանհինգը ներառյալ:

2) Պայմանագիրը լրացնել նոր 4-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ՝

<<4. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագրով վարձակալության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:

## 2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում պատշաճ վավերացման պահից:

2.2. Սույն համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև երկու հազար տաս թվականի հունվարի քսանյոթին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 (չորս) օրինակից:

2.4. Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:

## 3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 4. Կողմերի վավերապայմանները

| Կողմ-1 | Կողմ-2 |
| --- | --- |
| Գոռ Դերձյան | Արմենակ Մաթևոսյան |
| Անձնագիր. AK0368897, տրված՝ 01.09.2009թ. 008-ի կողմից | Անձնագիր՝ AM 0297251, տրված 13.05.2011թ. 013-ի կողմից |

Երկու հազար տասնհինգ թվականի ________ սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար ________ կողմից: Համաձայնագիրը ստորագրվել է քաղ. ________ի իմ ներկայությամբ: Նրա ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում 45563 ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար
համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և
«Նոտարիատի մասին» օրենքների
Նոտար